ՀՏԴ 159.9
Հոգեբանություն

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
հոգեբ.գ.թ.
ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոն

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Բուհում մասնագիտական պատրաստման գործընթացի մշտական վերահսկողությունն ու մշտադիտարկումը կրթության որակի կառավարման կարևորագույն բաղադրիչներից են: Ուսանողների շրջանում ուսումնական մոտիվացիայի մակարդակի որոշման սոցիալ-հոգեբանական հարցման մեթոդը հնարավորություն է տալիս լուծելու այդ խնդիրը և բացահայտել այն գործոնները, որոնք բացասաբար են անդրադառնում ուսումնական գործընթացի որակի վրա: Սույն հոդվածում ներակայացված են Արցախի պետական համալսարանում ուսումնական գործունեությունից սովորողների ուսումնական մոտիվացիայի մակարդակի վրա ազդեցություն ունեցող գործոնների հետազոտման որոշ արդյունքներ՝ համապատասխան վերլուծություններով և եզրակացություններով: Առանձնացված են հոգեբանական այն գործոնները, որոնք, մեր կարծիքով, ներազդում են կրթական ծրագրերի իրականացման որակի վրա:

Բանալի բառեր. *բուհ, ուսանող, մոտիվացիա, մեթոդ, սոցիալ-հոգեբանական հարցում, եզրափակիչ գնահատումով ստուգում, բավարարվածություն, միջազգային հավատարմագրում, ուսումնական առաջադիմություն, հոգեբանական գործոն:*

В.Ярамишян

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ ПОВЫШЕНИЯ УРОВНЯ УЧЕБНОЙ МОТИВАЦИИ У СТУДЕНТОВ

Постоянный мониторинг и контроль над процессом профессиональной подготовки в вузах является одним из важнейших составляющих процесса управления качеством образования. Метод социально-психологического опроса по определению уровня учебной мотивации у студентов дает возможность решить эти вопросы и выявить те факторы, которые отрицательно влияют на качество образовательного процесса. В данной статье с соответствующим анализом и заключением представлены некоторые результаты исследования факторов, влияющих на уровень учебной мотивации

обучающихся в Арцахском государственном университете. Выделены психологические факторы, которые, по мнению автора, влияют на качество выполнения образовательных программ.
Ключевые слова: *вуз, студент, мотивация, метод, социально-психологический опрос, проверка с заключительным оцениванием, удовлетворенность, международная аккредитация, академическая успеваемость, психологический фактор.*

V.Yaramishyan

SOME PSYCHOLOGICAL FACTORS OF INCREASING THE LEVEL OF STUDENTS' MOTIVATION IN EDUCATION

Permanent monitoring and control over the process of vocational training in universities is one of the most important components of the process of quality management in education. The method of socio-psychological survey of determining the level of academic motivation among students makes it possible to resolve these issues and identify those factors that negatively affect the quality of the educational process. The article presents the results, as well as corresponding analysis and conclusion of the study conducted at the Artsakh State University to determine the level of academic motivation among students. The psychological factors that, in the author's opinion, influence the quality of the implementation of educational programs are singled out.
Keywords. *university, student, motivation, method, socio-psychological survey, verification with final assessment, satisfaction, international accreditation, academic progress, psychological factor.*

Հայոց պետականությանն ու մեր ժողովրդի ազգային արժեքներին, մասնավորապես՝ մատաղ սերնդի դաստիարակությանն ու կրթական ոլորտի արդյունավետությանն սպառնացող վտանգները 21-րդ դարում սկսել են առաջ գալ ավելի արագ, քան հանրային մտածողության իներտությունը: Քարացած կարծրատիպերը, կառավարման համակարգի հնացած մոդելները թույլ են տալիս ադեկվատորեն հակազդելու դրանց: Հայտնի ճշմարտություն է. եթե նորահայտ խնդիրները ժամանակին չեն լուծվում, ապա կուտակվում են և խափանում համակարգը:

Որոշակի մարտահրավերներ սպառնում են նաև բարձրագույն կրթությանը: Ներկայումս ՀՀ և ԱՀ բուհերի մասնագիտական պատրաստման համակարգը հիմնականում ներառում է ուսումնական-մեթոդական, գիտական-հետազոտական, ուսանողների հետ տարվող և ապահովման (վարչատնտեսական) ուղղություններ: Իրավիճակի քննությունը մեզ բերել է այն համոզմանը, որ բուհում առավել արդյունավետ է այնպիսի մոտեցումը, որն իրարից տարանջատում է ուսումնական գործընթացի կազմակերպումը (հիմնականում՝ պլանավորումը, ապահովումը և իրականացումը) նրա բովանդակային կառավարումից (ծրագրերի բովանդակությունից, գործընթացի մանկավարժամեթոդական ուղղորդումից): Դրանք երկուսն էլ

ամբողջական, համեմատաբար ինքնուրույն գործընթացներ են: Առաջին խմբի երևույթների հիմքում ընկած է կազմակերպչական, իսկ երկրորդ խմբի երևույթների հիմքում՝ մեթոդաբանական բաղադրիչը: Պատկերավոր ասած՝ առաջինը միսն ու արյունն է, երկրորդը՝ հոգին:

Գաղտնիք չէ, որ ուսուցման արդյունավետությունն առավելապես կախված է այնպիսի կազմակերպչական խնդիրների լուծվածության աստիճանից, ինչպիսիք են օրենսդրական կարգավորումները, շենքային ու լսարանային պայմանները, պրոֆեսորադասախոսական և ուսանողական անձնակազմերի առկայությունը, ապահովման համակարգերը, նյութատեխնիկական միջոցները, ընդունված կանոնակարգերը, կանոնադրությունները և այլն: Արդյունավետության երկրորդ բաղադրիչը, անշուշտ, մեթոդաբանությունն է, այսինքն՝ այն, թե ինչ խնդիրներ են լուծվում, ինչ սկզբունքներով, ձևերով ու հնարքներով, այսինքն՝ մեթոդոլագիական ինչ հիմքի վրա է իրականացվում ուսումնական գործընթացը: Անհրաժեշտ ենք համարում նաև նկատել, որ ուսումնագիտական աշխատանքները և ուսանողների հետ տարվող աշխատանքները մանկավարժական երկմիասնական գործընթացի հավասարարժեք բաղադրիչներն են: Ուսանողների հետ տարվող աշխատանքը, ըստ էության, նույնական է դաստիարակությանը, թեև ունի իր կազմակերպական, բովանդակային և մեթոդաբանական առանձնահատկությունները: Այն, ինչպես դաստիարակությունը, չի կարող գոյատևել առանց ուսուցման: Ճիշտ է նաև հակառակ պնդումը. ուսուցումը նույնպես չի կարող գոյություն ունենալ առանց դաստիարակության, առանց անձի ձևավորման նպատակաուղղված գործընթացի[1]:

Այս պնդումները մանկավարժական պարզ, ելակետային դրույթներ են, սակայն դեռևս կենսունակ է մնում այն մոտեցումը, երբ դասախոսը բավարարվում է միայն ուսումնական խնդիրներ իրագործելով, ինչի արդյունքում որակյալ մասնագետների կողքին ունենում ենք նաև զգալի թվով լիարժեք չձևավորված շրջանավարտներ:

Պատճառները մի քանիսն են: Նախ՝ Բոլոնյան կրթական կամ կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը[2] (ճշգրիտ՝ այդ համակարգի դրույթների սուբյեկտիվ, ոչ ադեկվատ ընկալումը), թերևս, պահանջում է զուտ ուսումնական արդյունք և թվանշաններ (մոդուլներ, կրեդիտներ)՝ անձի համակողմանի ձևավորումը

---

[1] *Անշուշտ, կարելի է պլանավորել և իրականացնել միջոցառումներ, որոնք արտաքինից կարող են երևութականություն ստեղծել թե իրականացվում են որակյալ ուսանողական աշխատանքներ, մինչդեռ, իրականում, այդ տրամաբանությամբ կազմակերպվող աշխատանքները որևէ աղրես չունեն գիտական մանկավարժության ու հոգեբանության հետ:*

[2] *Տե՛ս ԱրՊՀ գործունեությունը կարգավորող ակտերի ժողովածու, Ստեփ, ԱրՊՀ, 2019թ., 674 էջ, էջ 29:*

թողնելով տվյալ բուհի իրավասությանը: Բանն այն է, որ այդ համակարգը մշակվել է եվրոընտանիքի երկրների համար և միտված է եղել ազգային-էթնիկական, գաղափարական-աշխարհայացքային, կրոնական և այլ տարբերությունների վերացմանը, ուստի ուղղված է եղել ազգային դաստիարակության դեմ:

Ունենք ևս մեկ՝ մոտիվացիայի[1] խնդիր, երբ կրթության որակի համար դասախոսը և ուսանողը քիչ են մտահոգված: Դասախոսը պարզապես որևէ իմաստ չի տեսնում ավելին մատուցելու, քան անհրաժեշտ է ուսանողին: Ուսանողն էլ հաճախ սովորում է այնքան, որքան անհրաժեշտ է պահանջվող գնահատականն ստանալու համար: Չմոռանանք, որ գործող համակարգով գնահատական ստանալն այնքան էլ դժվար չէ: Մոտիվացիոն ոլորտի[2] բարելավմանը չի նպաստում նաև պետության կողմից պահպանվող վճարովի-անվճար համակարգի առկայությունը:

Այսպիսի մոտեցումները հանգեցրել են նրան, որ բուհն սկսել է բախվել որոշ անտրամաբանական խնդիրների հետ, օրինակ՝ ուսանողը, հանձնելով ընթացիկ ստուգումները և վաստակելով պահանջվող նվազագույն միավորը, այլևս կորցնում է հետաքրքրությունը և չի հանձնում ստուգումներից ամենակարևորը՝ եզրափակիչ ստուգումը: Այս խնդիրը, լինելով ուսումնական, միաժամանակ դաստիարակչական է, որովհետև կապ ունի ուսումնական գործունեության նկատմամբ սովորողի կայուն վերաբերմունքի ու դիրքորոշումների համակարգի, նրա դրդապատճառների ու արժեքային կողմնորոշումների հետ: Այն, ինչ ակտիվացնում ու ձևավորում է ուսանողի վարքը, միանշանակ պետք է դասել հոգեբանամանկավարժական խնդիրների շարքին:

Գիտելիքների գնահատման գործող համակարգը[3], բացի նկարագրվածից, ձևավորել է մի իրավիճակ, երբ լիարժեք չի ապահովվում պահանջվող կրթական արդյունքը կամ պետական չափորոշիչը, որը նախատեսված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական

---

[1] *Մոտիվ, մոտիվացիա-լատ. movere-շարժել դրդել, կոչվում է այն ամենը, ինչ բացատրում է մարդու վարքը, հոգեկան երևույթ է, որը դրդում է մարդուն ընտրել գործողության այս կամ այն տարբերակը, տե՛ս. Н.И.Конюхов, прикладные аспекты современной психологии, термины, законы, концепции, методы, Москва, 1992., 72 стр*

2 Մոտիվացիա հասկացությունը Ա.Նալչաջյանը դիտարկում է առնվազն որպես 1. վարքի բոլոր դրդապատճառների համակարգը, անձի ընդհանուր կառուցվածքի կենտրոնական ենթահամակարգերից մեկը, 2. անձի կոնկրետ գործունեության դրդապատճառների խումբը, 3. դրդապատճառների խմբի ակտիվությունը, դինամիկան: Տես Նալչաջյան Ա.Ա. Հոգեբանական բառարան, Եր, Լույս, 1984, 240 էջ:

[3] *Տես ԱրՊՀ գործունեությունը կարգավորող ակտերի ժողովածու, Ստեփ, ԱրՊՀ, 2019., 674 էջ, էջ 295:*

կրթության մասին օրենքով»[1]: Խոսքը մասնագիտական (և ոչ միայն) հմտությունների, կարողությունների, կոմպետենցիաների մասին է: «Բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են՝ գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը» - նշված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքում[2]: Ընթացիկ քննություններով ստուգվում է միայն տեսական գիտելիքը: Ավելին՝ եզրափակիչ ստուգման ժամանակ կրկին ստուգվում է միայն տեսական գիտելիքը: Ուսանողի մասնագիտական կարողությունները, հմտություններն ու իրավասությունները մնում են չստուգված: Ճիշտ է, որոշ միավորներ կան նախատեսված պարապմուքներին հաճախելու և ուսումնական ակտիվություն հանդես բերելու համար, սակայն, որպես կանոն, այն դրսևորվում է համացանցից ներբեռնված կամ դասախոսի տրամադրած էլեկտրոնային դասախոսությունից պատճենված ռեֆերատի տարբերակով: Կարծում ենք, որ պարապմունքներին հաճախումների համար ակադեմիական միավոր տրամադրելը արդարացված չէ, քանի որ չի արտահայտում դասընթացի յուրացման որևէ կողմ: «Ներկա է եղել՝ ուրեմն մի բան է սովորել» պնդումը կեղծ է: Գուցե որոշ դեպքերում սկզբունքային մոտեցում է ցուցաբերվում, սակայն, դժվար չէ նկատել, որ նույնիսկ նման դեպքերում չեն ստուգվում որակավորումների ազգային շրջանակի պահանջների հիման վրա մշակված պետական չափորոշչի հիմնական բաղադրիչները՝ ***հմտությունները, կարողությունները, կոմպետենցիաները:*** Այստեղից էլ առաջանում են կրթության որակի համար մտահոգ դասախոսների և ուսանողների այն դժգոհությունները, թե ժամանակակից ստուգման համակարգը զոմբիացնում է ուսանողին, որը, օրինակ, «հայոց լեզվից կամ գրականությունից բավարար գնահատական է ստանում՝ լեզուն չբացելով»:

Այս և հարակից այլ խնդիրների հոգեբանական պատճառականությունը պարզաբանելու նպատակով 2017-18 ուսումնական տարում ԱրՊՀ ուսանողների շրջանում անց ենք կացրել սոցիալ-հոգեբանական հարցում: Հարցման նպատակն էր նաև բացահայտել Արցախի պետական համալսարանում ուսմանը խոչընդոտող երևույթները և գտնել այն հարցի պատասխանը, թե ինչու ուսանողները եզրափակիչ քննությանը չեն ներկայանում կամ ներկայանում են, բայց հրաժարվում են այն հանձնելուց: Հարցմանը մասնակցել են բոլոր ֆակուլտետների տարբեր խմբերի ուսանողներ, արդյունքներն ամփոփվել

---

[1] *ԼՂՀ Օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», ԱրՊՀ գործունեությունը կարգավորող ակտերի ժողովածու, Ստեփ, ԱրՊՀ, 2019թ., 674 էջ:*

[2] *Տե՛ս նույն օրենքը, Հոդված 22, կետ 5,*

են պարզ մաթեմատիկական մեթոդներով, վերլուծվել են քննարկումների ժամանակ, կատարվել են եզրակացություններ:

Հարցման համար առաջադրվել են այնպիսի հարցադրումներ, որոնց պատասխանելու համար ուսանողը պետք է ընտրեր «Այո, համաձայն եմ», «Այո՛ մասամբ համաձայն եմ», «Չեմ կարող ասել», «Այնքան էլ համաձայն չեմ», «Ո՛չ, համաձայն չեմ» հինգ տարբերակներից մեկը:

Աղյուսակ 1-ում բերված են հարցման ընդհանրացված արդյունքները:

Հարցման արդյունքներ

աղյուսակ 1

Հարգելի ուսանողներ, խնդրում ենք ուշադիր կարդալ հարցադրումը և հնարավոր պատասխաններից ընտրել առավել հարմար տարբերակը:		*այո՛, համաձայն եմ*	*այո՛, մասամբ համաձայն եմ*	*չեմ կարող ասել*	*այնքան էլ համաձայն չեմ*	*ո՛չ, համաձայն չեմ*
1.	Որոշ ուսանողներ 8 միավոր վաստակելուց հետո այլևս չեն ցանկանում սովորել	27%	30%	10%	18%	15%
2.	Գնահատման համակարգի վերաբերյալ համալսարանի ընդունած կարգերը չեն նպաստում ուսման նկատմամբ դրական վերաբերմունքի ամրապնդմանը	30%	25%	14%	14%	17%
3.	Դասախոսները եզրափակիչ քննությունն այնպես են ընդունում, որ ուսանողները չեն ցանկանում դրանց մասնակցել	14%	10%	13%	30%	33%
4.	Ես որևէ խնդիր չեմ տեսնում, որովհետև ուսանողն ստանում է իրեն հարկավոր 8 միավորը	18%	20%	20%	14%	28%
5.	Այստեղ խնդիր կա, և դա այն է, որ 8 միավոր ստանալը նույնիսկ թույլ ուսանողի համար չափազանց հեշտ է	30%	15%	16%	17%	22%
6.	Այդ երևույթից պետք է զգուշանալ, որովհետև ուսանողը միայն մեխանիկական հիշողությունն է զարգացնում, գործնական հմտություն չի ցուցաբերում, չի խոսում...	47%	18%	13%	8%	14%

7.	Ուսանողի իրավունքն է ինքնուրույն որոշելու, թե ինչ և ինչքան պիտի սովորի		45%	23%	9%	16%	7%
8.	Նա իրացնում է իր իրավունքը, բայց չի կարելի թույլ տալ, որովհետև դառնում է վատ մասնագետ		47%	17%	16%	12%	8%
9.	Գիտելիքների գնահատման գործող համակարգը պետք է	ավելի խստացնել	69%				
		մի քիչ մեղմացնել	31%				
10.	Համակարգչային եղանակը պետք է	հանել, վերացնել	30%				
		կատարելագործել	70%				
11.	Ստուգումներն ավելի շատ պետք է լինեն	համակարգչային	31%				
		գրավոր	23%				
		բանավոր	46%				
12.	Ստուգումների քանակը պետք է	ավելացնել	16%				
		քչացնել	84%				
13.	Պետք է ավելի մեծ ջանք թափել ուսուցման, այլ ոչ թե գնահատման որակի բարձրացման համար		84%	9%	5%	1%	1%
14.	Ստուգողական թեստերը պետք է տալ ուսանողին		45%	23%	12%	5%	15%
15.	Ուսանողին պետք է տալ միայն թեստի նմուշը		31%	12%	9%	19%	29%

Ուսանողների ակադեմիական առաջադիմության և ուսումնական մոտիվացիայի բարձրացման խնդրի լուծումը հոգեբանական հարթությունում է, որը հաճախ դուրս է մնում ուշադրությունից՝ տեղիք տալով այլազան քննարկումների: Մարզիչները և կենդանիների վարքն ուսումնասիրող մասնագետները լավ գիտեն, որ երբ վարժեցնողը որևէ գործողություն է պահանջում իր սանիկից, ապա խրախուսում է նրա միայն այն քայլը, որը հարկավոր է սովորեցնել, այսինքն, խրախուսանքը տալիս է սանիկին միայն այն ժամանակ, երբ վերջինս ճիշտ է կատարում վարժությունը: Ակնհայտ է, որ չի կարելի սկզբում խրախուսել մարզիկին, որից հետո միայն սպասել արդյունքին, կամ կենդանուն կոնֆետ տալ, հետո պահանջել վարժության ճիշտ կատարումը: Մոտիվացիան կանհետանա: Մարդուն, իհարկե, կենդանու հետ համեմատել չի կարելի, սակայն դրանից բնական օրենքի ճշգրտությունը չի նվազում:

Իսկ ի՞նչ կարելի է անել, որպեսզի ուսանողը, այնուամենայնիվ, ստեղծված իրավիճակում հաղթահարի հաշվենկատ մոտեցումը,

ներկայանա բոլոր կազմակերպվող ստուգումներին ու պարապմունքներին, շատ ու լավ սովորի և ոչ միայն ձգտում ունենա ստանալու բարձր միավորներ, այլև ինքնակատարելագործվելու, ինքնաիրականանալու ներքին պահանջմունք ձևավորի:

Մեր կարծիքով, խնդրի լուծմանը կնպաստի մի քանի պրագմատիկ հնարքների կիրառումը:

Կարելի է վերականգնել հաճախումների և ակտիվության համար հատկացվող 4 միավորների հատկացման տրամաբանությունը, այսինքն՝ հրաժարվել միայն հաճախումների համար միավոր տրամադրելու պրակտիկայից, քանի որ այն շփոթում է ակադեմիական արդյունքը ուսանողի անձնային հատկանիշի՝ պարտաճանաչության վրա հիմնված վարքային դրսևորման՝ պարապմունքից չբացակայելու հետ: Միավորները կամ նրա որոշակի չափաբաժինները ուսանողին տրամադրել միայն այն բանից հետո, երբ նա կհանձնի եզրափակիչ քննությունը, որի ժամանակ կցուցադրի իր հմտություններն ու կարողությունները, օրինակ՝ զարգացած բանավոր խոսքը, ասմունքելու, մաթեմատիկական խնդիր լուծելու, քիմիական փորձ կատարելու, ակնարկ, դիմանկար, տեղեկություն, շարադրություն գրելու, բնութագիր կազմելու, տեքստ թարգմանելու կարողությունը և այլն: Որպես լավագույն տարբերակ՝ կարելի է ուսանողին խնդրել, որպեսզի այլոց ներկայությամբ ներկայացնի, հրապարակայնորեն պաշտպանի իր այն աշխատանքը, որը քննաշրջանի ընթացքում կատարել է ինքնուրույն: Առավելագույն միավոր կարելի կլինի տրամադրել միայն հետազոտական և ստեղծագործական բնույթի աշխատանքին: Այն դեպքերում, երբ ուսանողը ձևականորեն ներկայացել է եզրափակիչ քննությանը, սակայն հրաժարվում է այն հանձնելուց կամ հանձնում է, բայց վաստակում է զրո միավոր, ակտիվության միավոր չպետք է հատկացնել, ընդ որում, նույնիսկ այն դեպքում, երբ պարտաճանաչորեն հաճախել է պարապմունքներին: Որպես տարբերակ կարելի է քննարկել ակտիվության միավորների որոշակի չափաբաժիններն այն հարաբերակցությամբ տրամադրելու առաջարկությունը, որն ուսանողը ստացել է եզրափակիչ քննության համար հնարավոր միավորի թվից: Օրինակ, եզրափակիչ քննությունից, որի համար սահմանված է առավելագույնը 6 միավոր, ստացել է 6:2=3 միավոր, ուրեմն ակտիվությունից, որի համար սահմանված է 4 միավոր, կստանա 4:2=2 միավոր: Ընդհանուր հատկացվող միավորը կլինի 3+2=5՝ առավելագույն 10-ի փոխարեն: Այսպիսի մեխանիզմը կապահովի ուսանողի շարժառիթավորումը, այսինքն՝ նա չի ցանկանա կորցնել հաճախումների և ինքնուրույն կատարած աշխատանքի համար իր «վաստակած» միավորները և անպայման կներկայանա եզրափակիչ քննությանը:

Այսպիսի մոտեցումը նաև կապահովագրի դասախոսի սուբյեկտիվ մոտեցումներից, քանի որ ինքնին պարունակում է բազմաթիվ օբյեկտիվ բաղադրիչներ, որոնց քանակի ու որակի վրա դասախոսն ազդել չի կարող՝

հաճախումների քանակը, ինքնուրույն աշխատանքի փաստացի կատարումը, քննությանը ներկայանալու պատրաստակամությունը և այլ գործոններ, որոնք չի կարելի անտեսել, այսինքն՝ դասախոսը չի կարող չգնահատել ուսանողի ձեռքբերումները: Եթե կա անհանգստություն, թե դասախոսը կարող է չարաշահել իրեն վերապահված այդ իրավունքը, ապա այստեղ կարելի է մշակել հավասարակշռման մեխանիզմներ, օրինակ՝ մասնակցության աստիճանը, սեմինարների ժամանակ հավաքած միավորները, ինքնուրույն աշխատանքի առկայությունը և որակը, բազմաթիվ այլ չափորոշիչներ, որոնք նվազագույնի կհասցնեն դասախոսի սուբյեկտիվ մոտեցումները:

Որոշ տաղանդաշատ ուսանողներ հնարավոր է, որ ընթացիկ քննություններից վաստակեն անհրաժեշտ անցումային միավորները, սակայն այդ անելը բավականին դժվար կլինի, իսկ հաջողվելու դեպքում հարց կառաջանա կամ թեստերի որակը վերանայելու, կամ ուսանողի նկատմամբ հատուկ վերաբերմունք մշակելու և նրա համար ուսուցման անհատական պլան կազմելու համար: Տաղանդավոր ուսանողի մոտիվացիայի խնդիրը, ըստ իս, հետևյալն է՝ մենք պետք է կողմնորոշվենք. ինչպիսի գիտելիքներով, հատկանիշներով ու կարողություններով շրջանավարտ ենք ուզում թողարկել՝ աշխարհաքաղաքացի՞, թե՞ ազգային ավանդույթներով տոգորված քաղաքացի: Այս խնդիրը համակարգային է, ուստի մեկանգամյա միջոցառումներով չի լուծվի, եթե համալսարաններում չստեղծվեն կրթության որակի ապահովման արդյունավետ մեխանիզմներ:

Գրականություն

1. ԼՂՀ Օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», ԱրՊՀ գործունեությունը կարգավորող ակտերի ժողովածու, Ստեփ, ԱրՊՀ, 2019թ., 674 էջ,
2. Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ, ԱրՊՀ գործունեությունը կարգավորող ակտերի ժողովածու, Ստեփ, ԱրՊՀ, 2019, 674 էջ, էջ 257,
3. Նալչաջյան Ա.Ա. Հոգեբանական բառարան, Եր, 1984, 240 էջ
4. Н.И.Конюхов, прикладные аспекты современной психологии, термиы, законы, концепции, методы, Москва, 1992, 72 стр .
5. https://hy.wikipedia.org/wiki/ Մոտիվացիա, առ. 26.04.2019թ.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հոգեբ.գ.թ., Ա.Մ. Մխիթարյանը: